ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
20	Վերնաշապիկ՝ պոլո, ասեղնագործ, ամենօրյա Պոլո ձևի կարճաթև վերնաշապիկը իր կարվածքով հարմարավետ է ակտիվ գործողությունների համար: Օգտագործված գործվածքների բաղադրությունը՝ նեյլոն, լաիկրա, բամբակ, համակցված այլ մանրաթելերից է, որոնք ունեն տարբեր հատվածներում՝ ըստ կիրառության, տարբեր մակերեսային խտություններ և տոկոսային հարաբերակցություններ: Պոլո շապիկը բաղկացած է առաջամասից, կոկետկայով թիկունքամասից, կարճ թևքերից և ծալովի օձիքից: Շապիկը կրծքամասի վերին հատվածը կոճկվում է 3 օղակ կոճակով, ընդ որում վերին կոճակը՝ օձիքին: Շապիկը արտադրվում է երկու տեսակի գործվածքից, ընդ որում ուսամասերը և թիկունքային հատվածը՝ մինչև կոկետկան, մշակված է ռիպստոպ տեսակի գործվածքից, իսկ մնացած մասերը՝ բամբակ, նեյլոն և լայկրա մանրաթելերի գործվածքից: Թևքերի մանժետները մշակված է 2.4-2.7 սմ լայնության մանժետով, իսկ շապիկի ստորին հատվածը մշակված է 6.0-6.5 սմ լայնության մանժետով : Շապիկի ուսամասերում՝ դեպի առաջամաս աննշան թեքվածությամբ, մշակված են 4.7-4.9սմ լայնության և 14-14.5 սմ երկարության ախլակներ, որոնք կոճկվում են 12-13 մմ տրամագծի կոճակներով: Ախլակների վրա պետք է տեղադրված լինի 7.5սմ երկարությամբ և 5.5 սմ լայնությամբ գործվածքի գույնի հանովի օղագոտի-ուսադիրները կոչումներով: Օղագոտու վրա պետք է ասեղնագործված լինի զինվորական կոչումները: Կրծքամասում մուգ կանաչ գույնի թելով ասեղնագործված (լցակարված ապլիկացիայի մեթոդով) պետք լինի 10.5×2.5 սմ կողմերով ուղղանկյուն շրջանակ, որի մեջ՝ ձախ կողմում պետք է ասեղնագործված լինի «ՀՀ ԱԱԾ» գրվածքը: Վերնաշապիկի ձախ թևքի վրա՝ ուսակարից 3.0 սմ դեպի ներքև պետք է մուգ կանաչ գույնի թելով ասեղնագործված (լցակարված

	ապլիկացիայի մեթոդով) լինի 9.0×7.0 սմ կողմերով սեպաձև շրջանակ, որի մեջ պատկերված է ՀՀ ԱԱԾ գունավոր զինանշանը: Շապիկի ձախ կողակարի եզրին կարի տակից կարվում է չափս-հասակի պիտակ: Փաթեթավորումը՝ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 60 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Գունավորումը և ձևը ըստ ներկայացվող նմուշի:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ОРАНЖ ГРУПП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
20	